ԱՐԴՅՈ՞Ք ՄԵԾ ՀԱՅՔԻ ԳԱԳԻԿ II-Ն Է
1072—1073 ԹԹ. ԵՂԵԼ ԽԱՐՍԻԱՆՈՒ ՄԵԾ ԴՈՒՔՍԸ

Պրոֆեսոր ՎԵՐՆԵՐ ՋԱՅԹ (Վիեննա)

Գրավոր պատմական աղբյուրները թերևս արդեն վաղուց լայն ճանաչում են գտել կամ առնվազն հրապարակվել են, մինչդեռ կնիքները այն նյութն է, որ դեռ կարող է անակնկալի բերել նոր տվյալների առումով։

Քննության առարկա կապարե կնիքը ես առաջին անգամ հակիրճ նեոկայսրեցի Մոսկվայում, բյուզանդագետների գիտաժողովում (1991-ի օգոստոսին), այնուհետև այն վաճառքի հանվեց (իմ նկարագրությամբ) Ցյուրիխում 1991 թ. նոյեմբերի 25-ին Շտեռնբերգի հերթական աճուրդում 4000 շվեյցարական ֆրանկ բարձր գնով։

Չնայած որոշ վնասվածքների, հնարավոր է կարդալ հետևյալ մակագրությունը. +KER, Θ, -TωCωΔUΛ, -[K]AKIKIω A-ΠPOEΔPω-E-ΠI TU KOITωN, ‖ SMΓAU KO-MITOC TOV-CTARAV Ξ MΓ-ΔUKωC X[AP]-CIANU Tω A-NIOT,.

Այսպիսով, անունը Καχίκιος ὁ Ἀνιώτης *է։ Ակներև է, որ ազգանունն ածանցված է Մեծ Հայքի Բագրատունիների մայրաքաղաքի՝ Անիի անունից, ոչ պակաս ակնհայտ է և այն, որ* Καχίκιος*-ը հայկական Գագիկ անվան համապատասխան հունական ձևն է։*

Այս անձնավորության հետ արդեն կապված է կնիքների մեկ այլ տեսակ, որի վրա լինում է հետևյալ արձանագրությունը՝ MAPIA-ΘVΓATHP-KAKIK-H‖ Tō ANI-ωTō. *Աթենքի կնքագրոշմը, որը ժամանակին թերի ձևով հրատարակել է Կոստանտոպուլոսը*[2] *և հետագայում ճշտել Ա. Պ. Կաժդանը*[3], *լավագույն ձևով ներկայացված է Խրիստոս Ստավրակոսի վիենական դիսերտացիայում*[4]. *տեքստի ընթերցումը հաստատվում է երկու նույնատիպ նմուշների օգնությամբ, որոնք պահվում են* Dumbarton Oaks*-ում, ինչպես նաև մեկ այլ նմուշով՝ Ջակոսի հավաքածուի մեջ։ Ըստ Կաժդանի տեսակետի, այդ* Καχίκης*-ը Մեծ Հայքի Բագրատունյաց տոհմի վերջին թագավոր Գագիկ II Անեցին է, բայց ինչպես իրավացիորեն նշել է Ստավրակոսը, դա բոլորովին էլ հավաստի չէ, քանի որ որոշ հնագրական առանձնահատկություններ, ինչպես օրինակ O—V կապգիրը, ավելի շուտ հատուկ են XII դարին։ Այնինչ մեր Գագիկի դեպքում շատ ավելի հավանական է, որ գործ ունենք Մեծ Հայ-*

---

[1] *Շտեռնբերգի աճուրդի կատալոգ՝ 25, 25—26. 11. 1991, № 504։*

[2] K. M. Konstantopulos. Βυζαντιακὰ μολυβδόβουλλα τοῦ ἐν Ἀθήναις Ἐθνικοῦ Νομισματικοῦ Μουσείου, Athen, 1917, № 603a.

[3] A. Kazdan. Deux corrections, ou deux personnages inconnus de L'histoire armeuo-byzantine, Byz 42 (1972), 602. ders.; **Армане в составе господствующего класса византийской империи в XI—XII вв.**, Ереван, 1975, 37. № 5.

[4] Ch. Stavrakos. Die byzantinischen Bleisiegel mit Familiennamen aus der Sammlung des Numismatischen Museums Athea, Diss. Wien, 1990, № 15.

քի նախկին թագավորի հետ, և XII դարով թվագրումը հստակ բացառվում է։ Այս վարկածը հիմնավորելու համար կցանկանայի մատնանշել նաև, որ Դավիթ Աբաս II կուրսեցին իր դստեր Մարիայի (Մարիամի) կնիքի վրա անվանված է Καικας և Κορωπαλατης։ «Անեցի» ազգանունը այնուհետև հանդիպում է մեկ այլ կնիքի վրա Dumbarton Oaks-ում (D. O. Neg № 55.63.5-2350)։ Երևսին ս. Գրիգորի կիսանդրին է (ընդ որում գերադասում եմ բաց թողնել այն հարցը, թե ո՞վ է այստեղ պատկերված՝ Կապադովկիայի եկեղեցու հայրը, թե՞ Հայաստանի լուսավորիչ Գրիգորը)։ Հետևի կողմից փորագրված է՝ ΚΕ R, Θ,-Τω Cω ΔΙΑ,—ΓΡΗΓΟΡΙω-ΔΙCVΠΑΤω-Τω ΑΝΙω-ΤΗ: Կնիքն անշուշտ պատրաստվել է XI դարի 50—70-ական թթ.։ Այս ժամանակաշրջանում Dishypatos-ը թերևս ավելի բարձր դիրք էր գրավում, քան Patrikios-ը։ Դժվար է ասել, արդյոք այդ Գրիգորը Դավիթ II-ի (մերձավոր) ազգականն է եղել, թե ոչ։ Իմ անձնական հավաքածուի մեկ այլ, վատ պահպանված կնիք (№ 78), հնարավոր է, պատկանել է Հովհաննես Անեցուն՝ Դավիթի ավագ որդուն։ Պարզ չէ, թե արդյո՞ք երեսի կողմի վրա նույնպես ս. Գրիգորն է պատկերված։ Հակառակ կողմի վրա գրված է Ιω- [Τω] ΑΝΙ-ωΤΗ. Այս կնքադրոշմը պատրաստվել է XI դարի երկրորդ կեսին։

Մեծ Հայքի Դավիթ II-ի մասին գիտենք, որ նա, 1045-ին ոչ միայն զենքի ուժով, այլև բյուզանդացիների նենգության հետևանքով զրկվելով իշխանությունից, մի կողմից ստացել է այդ ժամանակաշրջանի համար դեռևս համեմատաբար բարձր μαγιστρος տիտղոսը, մյուս կողմից, նյութական ապահովության համար, մի քանի կալվածք և դրանից բացի որոշ հարկային եկամուտներ 'Αρμενικὰ θέματα[6]-ում, այն է՝ Կապադովկիայում, Խարսիանոնում և Լիկանդոսում։

Դավիթն անտարակույս ուժեղ անհատականություն է եղել և աչքի ընկնող դեր է խաղացել Բյուզանդական կայսրության գոնե հայերի հասարակական շրջաններում (իսկ Հայաստանի մեծ մասը արդեն դարձել էր բյուզանդական)։ Գրական աղբյուրները, նախ և առաջ հայկականները, արժանահավատորեն փոխանցել են այն տպավորությունը, որ ոչ Դավիթն է ջանացել սերտ կապեր հաստատել բյուզանդական կայսրերի հետ (չնայած, ով կարող էր նրան դրա համար հանդիմանել) և ոչ էլ կայսերական արքունիքն է նման նախաձեռնություններով հանդես եկել. սրա քաղաքականությունն ավելի շուտ ուղղված էր նրան, որ խրախուսվեն նախկին տիրակալների ամենագործունյա հետևորդները և ազնվականները՝ բարձր զինվորական պաշտոնների և փայլուն կարիերայի հույսով։ Եվ ընդհակառակը, շատ քիչ վստահություն էր ցուցաբերվում դեպի նախկին հայկական թագավորական տոհմերը։

Բայց մինչև հիմա ընդունված այս պատկերացումները լրիվ հակասում են մեր կնիքի տվյալները։ Որպես տիտղոս այստեղ հիշատակվում է πρωτοπροεδρος-ը, որն ստեղծվել է ընդհանրապես միայն XI դարի 60-ական թթ.

---

[6] Կնքադրոշմ Ցայոսի հավաքածուից։ Երևսի կողմի վրա աստվածամոր պատկերի շուրջ կա հայերեն լեգենդ մակագրություն, որը ես մեկնարանում եմ իբրև «Մարիամ, օգնիր եպիսկոպոսուհուն»։ Հետևի կողմից գրված է՝ ΘΚΕ R, Θ, -ΜΑΡΙΑ ΚU-ΡΟΠΑΑ, ΤΙCΑ-ΤΙ, ΘV-ΓΑΤΕΡΑ-ΚΑΚ, ΚΙU TU ΚΑΡ-CIωTU THN ΕΚ ΦV...ΠΡ այս ոչ պարզունակ վերջաբանը դուցե կարելի է այսպես ենթադրել՝ τὴν ἐκ φύλης τ(ῶν)] Π(αγκ)ρ(ατ'ων) այսինքն, ամենայն հավանականությամբ, Մարիամը իր κουροπαλάτη: տիտղոսով պարտական է կուրապաղատի հետ ամուսնությանը։

[7] Հմմտ. W. Seibt. 'Αρμενικὰ θέματα als terminus technicus der byzantinischen Verwaltungsgeschichte des 11 Jh. „Byzantium and its Neighbours from the Mid -9th. Till the 12th Centuries" (Symposion Bechyné 10–15 Sept.1990). Prag. 1992 (տպագրվում է)։

սկզբին և նախապես բոլորովին առանձնահատուկ գնահատման նշան էր։ Μαγιστρος-ի πρωτοπρόεδρος-ի միջև ընկած էր πρόεδρος տիտղոսը, որը XI դարի 50-ական և 60-ական թթ. մատչելի էր միայն բարձրաստիճան անձանց փոքր շրջանին։

Առաջին հայացքից զարմացնում է սրան հաջորդող ἐπὶ τοῦ κοιτῶνος անվանումը, որ նշանակում է «կայսերական ննջարանի՝ Koiton-ի սպասավորների անձնակազմի առաջնորդ», քանի որ, ինչպես հայտնի է, Koiton-ում գրեթե բացառապես ծառայում էին ներքինիներ, հենց գոնե իրենց կյանքի համար մտահոգված կայսրերի անվտանգության նպատակով։ Գագիկը տարբեր փորձություններ է մատնվել, սակայն զերծ է մնացել ներքինացման անարգանքից։ Այս դեպքում անտարակույս նրան պարզապես տրվել է ἐπὶ τοῦ κοιτῶνος տիտղոսը, դրանով պիտի արտահայտված լիներ նրա անձնական մտերիմ հարաբերությունները կայսեր հետ, համենայն դեպս մի որոշակի կայսեր հետ։ Չմոռանանք նաև, որ գրեթե նույն ժամանակներում Անդրոնիկոս Դուկասը՝ Հովհաննես կայսեր ավագ որդին, զբաղեցնում էր պրոտոբեստիարոսի պաշտոնը, որն առավել ևս վերապահվում էր ներքինիներին։



Հետևյալ տեղեկությունը, որ պարունակում է կնիքը, մեկ այլ, ինչ-որ չափով վերամբարձ μέγας κόμης τοῦ στάβλου «կայսրական ախոռների պետ» անվանումն է։ Այստեղ ևս, ըստ իս, գործ ունենք լոկ տիտղոս տալու հետ, թեև կարելի է ենթադրել, որ դրա հետ կապված էին որոշակի արտոնություններ, թերևս այն իմաստով, որ Գագիկը, իր գլխավոր առաջադրանքի համար, որին մենք քիչ հետո կանդրադառնանք, կարող էր օգտվել կայսերական այս կամ այն ձիաբուծարանի ունեցվածքից։ Μέγας-ը այս իմաստով չի՞ նշանակում արդյոք, որ իրական κόμης τοῦ σταύλου-ը որոշ դեպքերում կախված էր Գագիկի հրահանգներից։ Սակայն վճռական նշանակություն ունի այն հանգամանքը, որ Գագիկը կնիքի վրա ինքն իրեն μέγας δοὺξ χαρσιανοῦ է կոչում։ Մետրիկական արձանագրության դեպքում սա կարող էր թերևս լինել թեմի զորավարի (ստրատեգի) անվանման մեկ այլ տարբերակ, բայց այստեղ ըստ երևույթին ոչ։ Մինչդեռ ստրատեգը միայն թեմի զորքի, այն է՝ թեմում հաստատաբնակ և նախ և առաջ στρατιωτικὰ κτήματα-ի միջոցով ֆինանսավորվող θέματα-ի հրամանատարն էր, աստիճանով ավելի բարձր δοὺξ-ը ղեկավարում էր այլ, կամ առնվազն նաև այլ զորամասեր, լինեին դրանք կանոնավոր τάγματα-ներ, ինչպես Scholen-ները կամ պահակախմբերը, թե հատուկ միավորումներ, ինչպես արտասահմանյան զորամասերը կամ

---

7 Նմանապես և Գրիգոր Մագիստրոսը, որը դեռ մինչև բյուզանդացիների կողմից Անիի գրավումը անցել էր կայսեր կողմը և այնուհետև բյուզանդական ծառայության մեջ գտնվելու օրոք հասել էր բարձր դիրքի, ունեցել է նույն պատվավոր տիտղոսը։

արտակարգ առիթներով նոր զորակոչված միավորումները։ Արտաքսվոր [illegible] անվանումը ևս կմնկնաբանվի որպես նշան այն բանի, որ Դավիթի հրամանատարության տակ էին դտնվում ոչ միայն թեմայի զորամասերը, այլև ուրիշ, օրինակ արդեն Խարսիանոնում տեղակայված կամ նոր զորակոչի ենթակա զորադնդեր։ Այն, որ Դավիթը կալվածքներ ուներ (ոչ միայն [illegible] Սեբաստիայում, այլև Խարսիանոնում, իսկ լինելով [illegible] նաև որոշ տուրքեր ստանալու իրավունք ուներ, հայտնի է մեզ գրավոր վկայություններից[9]։

Այժմ փորձենք կնիքից ստացած նոր տվյալները կապել Դավիթին վերաբերող այլ, ոչ մեծաքանակ տեղեկությունների հետ և որանով միաժամանակ չափանիշներ հաստատել կնիքը ավելի ճշդորեն թվագրելու համար։

Սկզբում Դավիթը բոլոր հիմքերն ուներ, չնայած մագիստրոսի իր տիտղոսին և որոշակի հասույթաբաժնին, իրեն բյուզանդացիներից որոշ հեռավորության վրա պահելու համար։ Մինչդեռ հայ ազնվականության մյուս ներկայացուցիչները, այդ թվում նաև Արծրունիները, սկզբում միայն համեստ դիմադրություն էին ցուցաբերում կայսեր և ուղղափառ եկեղեցու լիազորների՝ կայսրության նոր հպատակների հնարավորին չափ լիակատար ինտեգրացիայի հասնելու ձգտումներին, Դավիթի շուրջը ակնհայտորեն ստեղծվել էր մի կենտրոն, որը ցուցադրաբար հակադրվում էր ձուլման յուրաքանչյուր փորձին և կայսրության ներսում, հատկապես Կապադովկիայում, ուժեղացնում էր հայերի ազգային դիտակցությունը։ Դավիթն անձամբ կարողացավ բարելավել իր դիրքը, ամուսնանալով Դավիթ Արծրունու (+1035 թ.)՝ Վասպուրականի վերջին թագավորի որդու, միակ դստեր հետ և դրանով առնվազն տնօրինելու իրավունք ստանալով Դավթի նախկին տիրույթների ինչ-որ մասի նկատմամբ։ Իր կնոջ եղբայրների՝ Ատոմի և Ապուսահլի կողմից նա այնպիսի հարգանքի էր արժանացած, որ փաստորեն կայսրության բոլոր այն հայերի ոլուխ կանգնեց, որոնք դեռ հավատարիմ էին մնում հայության դաղափարին։ Դժվար է որոշել, թե նոր կայսեր և հայ իշխանական տների միջև հարաբերությունների լավացման վրա որքանո՞վ անդրադարձավ Սեբաստիա, Մելիտենե և Տեֆրիկե շրջաններից քիչ թե շատ հայկական զորամասերի մասնակցությունը հաջողակ ուղուրպատոր Իսահակ Կոմնենոսի կուսակցության գործողություններին 1057 թ.[10]։

Հակառակ դրան եկեղեցական քաղաքականությունը միանդամայն կարելի է գնահատել իբրև հայ-բյուզանդական հարաբերությունների բարոմետր, և այստեղ պիտի արձանագրվի, որ միայն Կոստանդին Դուկասի կառավարության վերջում, 1065/66 թթ., լարվածությունը որոշ չափով թուլացավ, քանի որ միայն այդ ժամանակ հնարավոր եղավ, որ ընտրվի ու իր պաշտոնին անցնի նոր հայ կաթողիկոս Գրիգոր Վկայասիրը։ Ընդ որում այնքի է զառնում այն հանդամանքը, որ նա իր աթոռանիստը հաստատեց Ծամնդավում՝ Դավիթ Կարսեցու «արքունիքում», որը հենց նոր էր իր տիրապետության տարածքները զիջել կայսերը։ Դավիթ Կարսեցին և նրա դուստր Մարիամը այդ ժամանակ շատ լավ հարաբերություններ ունեին կայսեր ու կայսրուհու հետ, և

---

8 Պետք է նշել նաև, որ այդ ժամանակ զորավար (Strateg) անվանումը դնալով վերանում էր և ավելի հաճախակի փոքր զորախմբերի ղեկավարների համար օգտագործվում էր դուքս (Dux), համապատասխանաբար Katepano տերմինը, այնպես որ նախկին ստրատեգները զոնե մասամբ պարզապես փոխարինվեցին դուքս-երով։

9 Հայ իշխաններին հանձնված տեղանքների կամ կալվածքների տեղադրությունը որոշելու հարցի վերաբերյալ հմմտ. F. Hild—M. Restle. Kappadoken (Kappadokia. Charsianon, Sebasteia und Zykandos) (Tabula Imperii Byzantini 2). Wien, 1981, 95—98.

10 Skyl. 491, 19f.

պետք է ենթադրել, որ իրենց է պատկանում կլիմայի այս, գոնե մասնակի, լավացման գլխավոր վաստակը[11]։

Ռոմանոս IV Դիոգենեսը, որն ակտիվորեն զորամասեր էր հավաքում նաև հայերի միջից, ակնհայտորեն խաթարված հարաբերությունների մեջ էր հին հայկական թագավորական տների հետ։ Զարմանալի չէ, որ Կապադովկիայում, հնուց այնտեղ բնակվող բյուզանդացիների և հայ եկվորների միջև, որոնք գոնե մասամբ իրենց տիրակալների նման էին պահում, լարվածություն և ընդհարումներ էին առաջանում։ Այն հանգամանքը, որ 1071 թ., երբ կայսրը իր բավական խառը զորքով կանգ առավ Սեբաստիայում, տեղի ունեցան իշխանության շարաշահումներ հայերի ու նախ և առաջ հայ ազնվականության նկատմամբ, այնքան էլ հասկանալի չէ։ Կայսրը չէր վստահում հայերի նվիրվածությանը (լոյալությանը) և զգացնել տվեց այդ։ Ըստ իս, համոզիչ չէ, թե իբր Գագիկ Անեցին, թեկուզ և միայն մյուսների հետ միասին, բայց այնուամենայնիվ կարողացել էր ի վերջո նպաստել ավելի հանդուրժելի domus vivendi գտնելուն[12]։

Ամեն դեպքում բազմաթիվ առանձին տեղեկություններ, ինչպես նաև արևելյան աղբյուրները գրեթե հաստատ բացառում են, որ Գագիկ Անեցին ինչ-որ բարձր զինվորական պաշտոն է զբաղեցրել Մանազկերտի աղետից առաջ ընկած ժամանակաշրջանում։ Կնիքի վրայի բավականին ճոռոմ ձևակերպումը նույնպես ավելի շուտ ենթադրում է ինչ-որ արտակարգ իրադրություն։ Դիոգենեսի պարտությամբ ու գերությամբ, ինչպես նաև Միքայել VII Դուկասի կայսր հռչակվելով իրադրությունն արմատապես փոխվեց նաև հայերի համար։ Թուլական նոր տիրակալը, որը բոլորովին ի վիճակի չէր գլուխ հանելու կայսրության ահռելի պրոբլեմներից, Մատթեոսի մոտ գրեթե անհասկանալի ձևով դրական բնութագիր է ստանում, որը համընկնում է ներբողյանի հեղինակ Պսելոսի գնահատականի հետ։

Սկզբում իսկական իշխանությունը Դուկասների ընտանիքի, հատկապես Հովհաննես կայսեր ու նրա որդիներ Անդրոնիկոսի և Կոստանդինի ձեռքում էր։ Վերջին երկուսը պրոտոպրոեդրոսի պաշտոնով հատուկ լիազորություններով ուղարկվել էին Արևելք, Կոստանդինը՝ 1071 թ. վերջին, իսկ Անդրոնիկոսը՝ 1072 թ.՝ տապալված Դիոգենեսին իրենց ձեռքը գցելու նպատակով։ Նրանք ստիպված էին ինքները հոգալ մարտունակ բանակ ստեղծելու մասին և հասկանալի կլիներ, եթե փորձեին իրենց կողմը գրավելու այն հայ իշխաններին, որոնք սեփական հաշիվներ ունեին Դիոգենեսի հետ[13]։ Այս պարագաներում Գագիկ Անեցուն πρωτοπρόεδρος տիտղոսի աստիճանին բարձրացնելը, ինչպես նաև (μέγας) δοὺξ Χαρσιανοῦ նշանակելը, գրեթե տրամաբանական հեռանկար կլիներ, անշուշտ կապված որոշակի ռիսկի հետ, ինչպես շուտով պարզվեց։

Աղբյուրներն իրոք տեղեկություններ են հաղորդում զորամասերի մասին, որոնք գոնե Գագիկի կյանքի վերջում գտնվում էին նրա տրամադրության տակ։ Սա փաստ է, որը ոչ մի կերպ համատեղելի չէր լինի 50-ական կամ 60-ական թթ. նրա զբաղեցրած դիրքի հետ։

---

11 Մատթեոս Ուռհայեցին բերում է այդ ժամանակաշրջանին վերաբերող հայ առաքելական մի հավատամք, որպես նրա հեղինակ նշելով Գագիկ Անեցուն, որը սակայն հավանաբար ի սկզբանե իր գրչին է պատկանել (195—214, Դոստուրիան, 188—208). խորհրդանիշի վերաբերյալ հմմտ. Մ. Կ. Գրիգորյան. Երկու աստվածաբան թագավոր Հայաստանում՝ Գագիկ Արծրունի Վասպուրականեցի Գագիկ Բագրատունի Անիից (Անհայտ էջեր Հայաստանի և Բյուզանդիայի եկեղեցական հարաբերությունների մասին) M. K. Krikorian. Two Theological Kings in Armenia—Gagik Arcruni of Vaspurakan/Gagik Bagratuni of Ani (Neglected Pages of Armenian Dialogue with Byzantium), Macedonian Studies n. s. 1/2 (1987) 45—49.

12 Հմմտ. Մատթեոս, 238, Դոստուրիանի թարգմ. 232։

13. Հմմտ. նաև W. Seibt. Die byzantinischen Bleisiegel in Österreich, 1, Teil: Kaiserhof, Wien, 1978, S. 129—131.

Դժբախտաբար Մատթեոսը, որ մեր հիմնական աղբյուրն է հանդիսանում, բավականին անհուսալի է Գագիկին վերաբերող տեղեկությունների ժամանակագրման հարցերում։ Նրա մահը վերագրում է 1079/80 թ.[14]։ Մինչդեռ մի քանի տարբերության և ընդհանուր ժամանակագրական մտորումների հիման վրա Դ. Դեդեյանը մեծ հավանականությամբ դուրս է բերել, որ Գագիկը արդեն շատ ավելի վաղ է սպանվել՝ 1073 թ., ինչը հետագայում ընդունվել է մեծամասնության կողմից[15]։

Մյուս կողմից, ոչ մի կերպ ընդունելի չէ, իբր Մարկոս անունով Կեսարիայի ուղղափառ միտրոպոլիտի եղերական վախճանի և բյուզանդացի կանանց հանդեպ Գագիկի զինվորների սանձարձակությունների մասին առասպելական պատմություններ տեղի է ունեցել 1065 թ.[16]։ Եթե սրա հիմքում ընկած է պատմական իրողություն, տպա այն հավանական է միայն Մանազկերտի ճակատամարտից հետո և այն նոր ուժային հարաբերակցության ֆոնի վրա, որն առաջացել էր Գագիկի կողմից հրամանատարությունն ստանձնելուց հետո։ Բացի այդ, վերոհիշյալ հաղորդումները պետք չէ շատ հեռացնել, «Մանդալեի որդիներիս» վրեժխնդրության գործողությունից[17], այսինքն՝ Գագիկի սպանությունից։ Վերջինս ենթադրում է ավելին, քան միայն հակակրանք կամ ընդհանուր թշնամական տրամադրվածություն։

Այդ պատճառով ես ենթադրում եմ, որ Գագիկ Աննեցին 1071 թ. վերջին կամ 1072 թ. ստացավ այդ կնիքի վրա նշված հրամանատարությունը և պահպանեց այն մինչև իր մահը, որ տեղի ունեցավ մեկ տարի անց։ 1072 թ. Դիոդենեսին գերի վերցնելու ժամանակ հայերի էինակոչը ակնհայտորեն դեռ ոչ մի ազդեցություն չէր ունեցել, համենայն դեպս աղբյուրներում դրա վերաբերյալ ոչ մի արձագանք չկա։ Հայ-բյուզանդական այդքան բարդացած հարաբերությունների պատճառով Դուկասների ընտանիքի հաշիվները Արևելքում չարդարացան։ Գագիկ Աննեցին և այլ հայեր, որոնց վստահվել էին բարձր ու բարձրագույն զինվորական պաշտոններ, իրենց չդրսևորեցին որպես արքունիքի քաղաքականության հլու-հնազանդ գործիքներ, նրանք ավելի շուտ ձգտում էին հնարավորություններ ստեղծել իրենց սեփական նպատակներին հասնելու համար. դրանց մեջ ամենահաջողակը եղավ Փիլարետ Բախրամիոսը (Փիլարետոս Վարաժնունին)[18]։

---

14 Մատթեոս, 263—265, Դոստուրիանի թարգմ., 254—256։

15 G. Dédéyan (հրատ.), Histoire des Arméniens. Toulouse, 1982, 308; հմմտ. F. Hild—H Hellenkemper. Kilikien und Isaurien (Tabula Imperii Byzantini 5). Wien, 1990, 63 mit A 351. Դեդեյանի մանրամասն բանավեճը մահվան տարեթվի վերաբերյալ հրատարակման մեջ է։

16 Մատթեոսի մոտ՝ 216—220, Դոստուրիանի թարգմ., 210—213։

17 Դյուլորիեն ուզում էր Մատթեոսի իր թարգմանության մեջ անունը ուղղել և դարձնել Պանտուլեոն (էջ 183), ինչում և ունեցավ բավական թվով հետևորդներ։ Սակայն պետք է նշել, որ հենց այդ ժամանակաշրջանի համար, մոտավորապես 1075 թ. կարող ենք նշել Μανδαλος անունը, ոմն σπαθάριος (!) και στρατηγος Λέων-ի համար, որը Թրակիայում խառնված էր իրավական վեճի մեջ. Psellos. Λόγος επι τω εν Βλαχέρναις γεγονότι θαύματι. „Catalogue des manuscrits alchimiques grecs VI, ed. J. Bidez. Brüssel, 1928. 196. 12f.

18 Հմմտ. J.-C. Cheynet—J. F. Vannier. Etudes prosopographiques (Byzantina Sorboneusia 5), Paris, 1986, 66—73 Այս ժամանակաշրջանում հայտնաբերված կնիքի շնորհիվ կարելի է ապացուցել, որ Փիլարետոսը Ալեքսիոս I Կոմնենոսի օրոք նույնիսկ բարձրացավ մինչև στρατοπέδαρχος και δομέστικος της Ανατολής աստիճանի։ Հմմտ.՝ Շտեռնբերգի աճուրդի կատալոգ, 25, 25—26, 11, 1991, № 505, J.-C. Cheynet—C. Morrison. W. Seibt, Les sceaux byzantins de la collection Henri Seyrig. Paris, 1992.

БЫЛ ЛИ ГАГИК II ВЕЛИКОЙ АРМЕНИИ ВЕЛИКИМ ДУКОЙ ХАРСИАНЫ В 1072—1073 гг.

Проф. *ВЕРНЕР ЗАЙБТ* (Вена)

Резюме

Рассматриваемая в статье свинцовая печать впервые была представлена в кратком описании на конференции византинистов в Москве в 1991 г. 25 ноября того же года она была выставлена на очередном аукционе Штернберга в Цюрихе. В статье обосновывается, что названный на печати Гагик Анеци—последний царь Анийского царства Гагик II, который, лишившись в 1045 г. престола, получил в Византии титул магистра, поместья и право взымания податей в Каппадокии, Харсиане и Ликанде. Гагик II был сильной личностью и играл выдающуюся роль в среде армян Византии, однако он не стремился к установлению тесных связей с византийскими императорами.